

**ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ՀԱՅ  
ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԴԻՄԱԳՐԱԿԱԾ ՄԱՐՏԱՀՐԱԿԷՐՆԵՐԸ**

**Հայաստան – Սփիւռք Համահայկական 6-րդ Համաժողով,  
18-20 Սեպտեմբեր 2017, Երևան- Հայաստան**

*Զեկուցաբեր՝ Վեր. Յարութին Սելիմեան  
Համայնքապետ՝ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի*

Միջին Արեւելքի մէջ զարգացող քաղաքական-պատերազմական իրավիճակը, անտարակոյս, կը մտահոգէ հայ զանգուածները ամէնուրեք: Իւրաքանչիւրին մտահոգութեան առանցքը կը կազմէ Միջին Արեւելքի հայութեան ապագայ կացութիւնը:

Շուրջ եօթնամեակ մըն է, որ սուրիահայութեան կացութիւնը վերածուած է համազգային տագնապի:

Ցարդ առաջնային եւ ամենակարեւոր հարցը կը մնայ գաղութին անվտանգութիւնը եւ տիրող քառուէն նուազագոյն վնասով դուրս գալը, ինչ որ հնարաւոր է միմիայն քաղաքական յարաբերական բազմակողմանի աշխատանքներու շնորհիւ: Քաղաքական յարաբերական աշխատանքներու յաջողութեան համար անհրաժեշտ են համազգային զօրաշարժ, համահայկական համընդհանուր մասնակցութիւն:

Մինչ հակամարտութիւնը կ'ընդլայնուէր Հալէպ քաղաքին մէջ, հազարաւոր մարդիկ կը պայքարէին պահպանելու համար իրենց ապահովութիւնն ու առօրեայ ապրուստը: Շարունակաբար կարիքաւորներու թիւը կ'աճէր ու ընթացք կ'առնէր: Լաւ գործող նախկին առողջապահական համակարգը տկարացած էր, պարենային դժուարութիւնները խորացած, ջուրի եւ էլեկտրականութեան մատակարարումը՝ դադրած: Բժշկական օժանդակութիւնները սահմանափակուած էին, հիւանդանոցները՝ քանդուած, բժշկական համակարգէն ներս աշխատողները դադրած էին, մասամբ երկիրը թողած ու հեռացած: Իսկութեան մէջ այս մարդկային դրամազուլուխն էր, որ

տնտեսութեան ղեկը ստանձնած էր, եւ ի վերջոյ անոնց տկարացումով համայնքներ կը քայքայուէին: Բնակարաններու եւ գործատեղիներու գողութիւններու թիւը հսկայ աճի մէջ էր, ներառեալ ոճրագործներու յափշտակութիւններն ու կողոպուտը: Կեանքը ըստ էութեան դարձած էր ռումբերու, հրթիռներու եւ պայթումներու անվերջ մղձաւանջ մը:

Պատերազմի այս ահաւոր օրերուն Սուրիոյ հայ աւետ. համայնքը պարտաւորութիւն ստանձնեց նիւթական նոր աղբիւրներ որոնելու, որպէսզի պատասխանատու դիրքով փութայ կարիքաւոր ընտանիքներու եւ անհատներու օգնութեան: Մշակուեցաւ գործունէութեան ծրագիր, որ ընդգրկեց հերթական նիւթական նպաստաբաշխումներ, դեղօրայքի եւ բժշկական օժանդակութիւններ, Հալէպ ապաստանած հայորդիներու տան վարձքերն ու ապրուստը հոգալը, ինչպէս նաեւ համալսարանականներու եւ հայ աւետարանական դպրոցներու աշակերտներու կրթաթոշակի օժանդակութեան վեհ գործը:

Սուրիոյ ծովափնէայ շրջանին մէջ նշանաւոր է հայաբնակ Քեսապը, գոր մէկ անգամ կորսնցնելէ եւ վերատիրանալէ յետոյ փախստական բնակչութիւնը վերադարձած է եւ վերսկսած իր բնականոն կեանքը՝ բոլոր իմաստներով:

Տեղին է նաեւ յիշատակել, որ միջազգային ընտանիքին մօտ հինէն ի վեր խօսուած է ո՛չ միայն Սուրիոյ, այլ միջին արեւելեան երկիրներու բաժանման տեսութեան մը մասին, եւ կան մարդիկ, որ այդ ուղղութեամբ կանխամտածուած կերպով կը գործեն: Անոնք կ'առաջարկեն հեռահաս նպատակներով ծրագիրներ:

Շարունակուող պատերազմը եւ հետզհետէ ծանրացող կացութիւնը պատճառ դարձաւ ահաւոր վիճակներու ստեղծման՝ ըլլան անոնք մարդկային կորուստներ, հոգեկան անկումներ եւ նիւթական ծանր վիճակներ:

### **Սուրիահայութեան մարտահրաւերները պատերազմի օրերուն**

Դարերով հայրենի մեր ժողովուրդին ճակատագրուած ծանր պայմաններուն բերումով, պարսկական, հռոմէական,

մոնկոլթաթարական, թուրք ցեղախումբերու ալիք առ ալիք արշաւանքներուն եւ անոնց դժխեմ տիրապետութեանը իբրեւ հետեւանք եղած են զանգուածային տեղահանութիւններ ու գաղթեր, նաեւ դէպի Սուրիա: 1915 թուականի ցեղասպանութենէն փրկուած հայեր հաստատուած են ո՛չ միայն Հալէպ, այլ նաեւ անոր մերձակայ կարգ մը քաղաքներուն մէջ, ուր շինած են իրենց մատուո-եկեղեցիները, ապրած օրինապահ եւ բարեհամբաւ կեանք՝ արհեստաւորի, հողամշակի, առեւտրականի բարձր մասնագիտական յատկանիշներով:

Այսօրուան Միջին Արեւելքի մէջ զարգացող քաղաքական եւ ռազմական հրաբխային իրավիճակը, անոր մտահոգիչ մակընթացութիւնները, անտարակոյս, կը մտահոգեն նաեւ հայ զանգուածները ամէնուրեք: Ահաւասիկ Սուրիոյ պատերազմի ամէնէն մտահոգիչ երեւոյթը մեր ժողովուրդին արտագաղթն է: Շատեր մեկնած են եւ տակաւին կը մեկնին Գանատա եւ երոպական երկիրներ, յատկապէս Շուէտ, Գերմանիա եւ Աւստրիա: 15 հազար սուրիահայեր ապաստանած են Լիբանան, նոյնքան է թիւը Հայաստան ապաստանողներուն:

Իսկ եթէ վերլուծումի պիտի ենթարկել պարզուած քաղաքական կացութիւնը ու հայութեան ճակատագրին վերաբերեալ ելքեր կանխատեսել ընդհանրապէս՝ պէտք է նշել, որ սոյն պատերազմը պատճառ հանդիսացաւ այլազան տագնապներու՝

1) Արտագաղթի հետեւանքով կը տկարանայ նաեւ հայապահպանման գործընթացը: Հայապահպանման գործընթացը կը բնորոշենք որպէս հաւատքի առաքելութիւն ու ազգային ծառայութիւն: Այսօր անհրաժեշտ է գաղութներու կեանքը կազմակերպչական զօրեղ հիմերու վրայ դնել. մեր կեանքը թրծել հոգեւոր բարոյական ու ազգային արժէքներով, հայ դպրոցը աւելիով հզօրացնել իր մարդակերտումի ու հայակերտումի առաքելութեամբ, մեր մշակութային արժէքները լայնօրէն տարածել մեր ժողովուրդի կեանքին մէջ, մեր ազգային պահանջատիրութեան նոր թափ տալ եւ Հայաստանի հզօրացման բերել սփիւռքի գործօն մասնակցութիւնը: Այս առաջնահերթութիւնները Հայ Աւետարանական Եկեղեցիի կեանքին ու առաքելութեան ուղեգիծը կազմելու են:

2) Դժբախտաբար օտար ավերու մեջ ձուլումի ենթարկուած հայ անհատը ենթակայ է կորսնցնելու իր հայկական ինքնութիւնը: Բացայայտ իրականութիւնը այն է, որ ներկայիս մեզի ժառանգուածը պահպանելու շատ մեծ դժուարութիւն ունինք: Սոյն կորուստը առաջին հերթին կ'արտացոլայ նոր սերունդին քով մայրենի լեզուին աղաւաղումով, ապա ամբողջական կորուստով:

3) Արտագաղթը իր ժխտական ազդեցութիւնը կ'ունենայ նաեւ հայ անհատի կեանքին մեջ, որովհետեւ այլ կրօններէ ու մշակոյթներէ ներառուած ասանդութիւններ ու ըմբռնումներ փաստօրէն կը նկատուին օտար ու խորթ եւ հետեւաբար՝ անընդունելի: Կրօններու հեռաւոր արմատները նոյնն են: Սակայն նաեւ տարբերութիւններ գոյութիւն ունին հոգեւոր արժէքներու միջեւ: Հոգեւոր արժէքները տեսական, բնագանցական երեւոյթներ չեն: Անոնք սերտ աղերս ունին տուեալ կրօնի, ժողովուրդի ու միջավայրի մշակոյթին հետ:

4) Դաժանը ճիշտ նկարագրութիւնն է: Պատերազմի օրերուն գործագուրկ մարդկանց թիւը կ'աճէր շատ արագընթաց եւ տնտեսութիւնը յստակօրէն անկումի մեջ էր, իսկ ժողովուրդին կարիքները՝ բազմազան: Աւելի մխիթարական չէ գաղթողներուն պարագան: Բազմաթիւ հայորդիներ, որոնք տնտեսապէս լաւ վիճակ ունէին Սուրիոյ մեջ, մեծամասնութեամբ անգործ են օտար ավերու մեջ: Սրտաճմլիկ կացութիւն մը ստեղծուած է: Գործաւորներ իրենց արհեստին վերաբերող գործեր կը փորձեն կատարել, սակայն շատ ավելի նուազ վարձատրումով: Ուրիշներ ալ բնաւ աշխատանքի ընդունուելու կարելիութիւնը չունին, որովհետեւ ապաստանած երկրին լեզուն բաւարար ձեւով չեն տիրապետեր եւ կամ հարկ եղած վկայականները չունին:

5) Դժբախտաբար այսօր Սուրիան քառսային վիճակ մը կ'ապրի, եւ ես, ինչպէս շատ ուրիշներ, խաղաղութեան ջատագովն եմ: Անվտանգութիւնը կարմիր գիծ է մեզի համար: Մեր ժողովուրդին եթէ վտանգ կը սպառնայ, ինչ անուն ալ կրէ այդ ղեկավարութիւնը, պատասխանատուն կամ պատասխանատուները, երբ այդ վտանգին դիմաց համապատասխան տնօրինում, դասաւորումներ չընեն, սխալ կ'ընեն, եւ

պատասխանատուութիւնը վերջաւորութեան կ'իյնայ իրենց ուսերուն վրայ: Բայց, երկրորդ կէտ, նկատի ունեցէք, որ զարգացումները կամայական, մնայուն մէկ տեսակետով չէ որ կը շարժին, հետեւաբար մեզ կը պարտաւորեցնեն երբեմն վերատեսութեան ենթարկել մեր ծրագիրները: **Սկզբունքը սա է, որ Միջին Արեւելքի մէջ հայութեան ներկայութիւնը մեր դատին, մեր իրաւունքներուն եւ մեր գոյութեան համար անհրաժեշտ ներկայութիւն մըն է, մեր կամքէն անկախ:**

Սուրիոյ ամբողջ տագնապին մէջէն ամբողջ համայնք մը վերցնել եւ դուրս բերել, այսպէս կոչուած վտանգի մասին մարգարէութիւններ ընելով, այդ օրերուն ճիշդ չէր: Այդ օրերուն, տրուած ըլլալով որ ծանօթ ենք երկրի ուժականութեան եւ ներկայութեան, ճիշդ համարեցինք մնալ, գաղութը պահպանել, շարունակել, մինչեւ որ տեսնենք, թէ ինչ հուն կը ստանայ տագնապը:

Թոյլ տուէք վստահեցնեմ, որ չկայ պատասխանատու մը, որ պիտի ուզէր սուրիահայերը Սուրիա պահել: Այդ հոգեբանութիւնը չկա՛յ, գոյութիւն չունի՛, բայց որպէս քաղաքացիներ ունինք մեր իրաւունքները չկորսնցնելու խնդիր, այսօրուան եւ գալիք ժամանակներու մէջ մեր տունները, կալուածները պահելու խնդիր:

6) Հայ աւետ. եկեղեցիները շարունակեցին իրենց պաշտամունքներն ու ժողովները կանոնաւոր հերթականութեամբ: Հայ աւետ. եկեղեցիներու կիրակնօրեայ պաշտամունքներուն ներկայ կ'ըլլար խուռներամ բազմութիւն: Տերը հրաշալի կերպով կը գործէր մարդկանց կեանքին մէջ: Ինչպէս նաեւ Հայ Աւետ. Եկեղեցին շարունակեց իր ընկերային ծառայութեան առաքելութիւնը՝ հասնելով հայ համայնքի ընտանիքներուն, առանց յարանուանական խտրութեանց, հայթայթելով այլազան օժանդակութիւններ:

- Հայ Աւետ. Եկեղեցին փոքրիկներու կեանքին մէջ ունեցաւ մեծ ներդրում՝ ամառնային Ս. Գրոց վարժարանի, կիրակնօրեայ դպրոցի եւ «Արմիս» երաժշտանոցի միջոցաւ:

–«Բեթել» բուժ կեդրոնը նոյնպես ձեռնահաստերեն գործեց՝ հայթայթելով բուժման միջոցներ, ինչպես նաև օգտակար ըլլալով երկարատև հիւանդութենէ տառապող անհատներու, շնորհելով անոնց անվճար դեղորայք:

Այս առթիւ մեր շնորհակալութիւնն ու երախտապարտութիւնը կը յայտնենք բոլոր նուիրատու կողմերուն, որոնք մեծ սիրով եւ անկեղծութեամբ ընդառաջեցին մեր օգնութեան կոչին, մեր դժուարութիւններուն ցաւակից եղան՝ ճգնաժամային իրավիճակներէ փրկելով հարիւրաւորներ:

Սուրիահայութիւնը ամէն գնով պէտք է մնայ Սուրիոյ մէջ, պէտք է կառչած մնայ իր երկրորդ հայրենիքին, հնարաւորինս բացառելով արտագաղթը:

Սուրիոյ մէջ մեր կառչած մնալը նաև պէտք է ունենայ ազգային ռազմավարական իմաստով այն նշանակութիւնը, թէ Սուրիա–Լիբանան գաղութներն են, որոնք աւին կը ներարկեն համատարած սփիւռքին, եւ այդ ունի իր մէջ հայապահպանման գործընթացը երաշխաւորող տուեալներ: Առաւել, մեր գրաւեալ հողերուն մօտ մնալու հրամայականէն թելադրուած, Հալէպը պէտք է պահել հայաբնակ ու կենսունակ՝ իբրեւ պահանջա տէր ժողովուրդ:

Այսօր հալէպահայութիւնը տագնապահար կացութեան մատնուած է, սակայն տակաւին կը տոկայ: Ի հեճուկս քանդումներուն, զոհերուն ու վիրաւորներուն՝ հալէպահայութիւնը դեռ կանգուն է, տրամաբանութեամբ չընկալուող դիմադրողականութիւն մը ցոյց կու տայ, ո՛չ զենքով, ո՛չ ալ կռիւներուն մասնակցելով, այլ իր բնականոն կեանքը շարունակելով, դպրոցներով, եկեղեցիներով, ակումբներով ու մշակութային ձեռնարկներով: Իսկ արտակարգ իրավիճակներու մէջ յայտնուած հայերուն ըստ կարիքի օժանդակութիւններ տրամադրուեցան:

Հալ է պի պատէր ազմակնն դժուարին օրերուն մէջ նաև ողջունելի էին Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններու կողմէ ընձեռուած բազմապիսի օգնութիւնները, որոնք սատարեցին թէ՛

Հալէպ մնացողներուն, եւ թե՛ Հայաստանի մէջ բնակութիւն հաստատած սուրիահայութեան բարեկեցութեան:

Այսօր սուրիահայութիւնը ուղղակի շփոթած վիճակի մէջ է: Շփոթած՝ այն իմաստով, որ մատնուած է անորոշութեան, թէ ինք ինչպիսի՞ կողմնորոշում ունենալու է, կարգապահութեամբ ինչպիսի՞ դիրքորոշում պէտք է ծաւալէ եւ ընդարձակէ: Այսօր նպատակադրուած ո՛չ մէկ իրականութիւն գոյութիւն ունի:

Ուստի, Հայ համայնքին համար արմատական ու հիմնահարց է ամէնէն մօտ տարածքի վրայ մնալ եւ անիկա այսօր, հայ համայնքին համար, Հալէպ քաղաքն է: Հալէպը պէտք չէ պարպել, ընդհակառակը, Հալէպը այսօր մնայուն ներկայութեամբ, իր կենսունակութիւնը վերագտնելու է: Հալէպը կենսունակ պէտք է պահուի, որովհետեւ անոր կենսունակութեամբ նաեւ սփիւռքի տարբեր բնագաւառները, ներառեալ Հայաստանը՝ մեր հայրենիքը կը լիցքաւորուին: Այնքան ատեն որ Հալէպը կը մնայ կենսունակ՝ իւրաքանչիւր կողմ կրնայ օգտուիլ անոր ունեցած հարստութիւններէն ու կարելիութիւններէն: Իսկ եթէ Հալէպը պարպուի իր բնակիչներէն, գործարարներէն, մտաւորական խաւէն, ուսուցիչներէն, հաստատութիւններէն, իր ժողովուրդի բանուորներէն եւ այլ մաշտապով գործ, կեանք ծաւալող բոլոր շերտաւորումներէն՝ անոր ազդեցութիւնը եւ վնասը պիտի կրեն սփիւռքի տարբեր օճախները եւ հայրենիքը:

Այս իմաստով, իբրեւ հայ համայնք, Արաբ ազնիւ ժողովուրդին բարի տրամադրութեան, բարի կամեցողութեան հետ, այսօր պէտք է փոխադարձ նոյն կամեցողութիւնը եւ նոյն ազնիւ դիրքորոշումը ունենալ: Այսօր, երբ քաղաքական լարուած հոսանքները Սուրիոյ Արաբ ժողովուրդը տարբեր խմբաւորումներու բաժնեցին ու զինեցին, հայ համայնքը պէտք չէ քննադատ ըլլայ եւ իր իրաւունքներն ու ապագան որեւէ կողմի հետ տեսնէ:

Այսօր կը խօսինք իբրեւ Սուրիացի եւ որպէս լիիրաւ քաղաքացի մեր հաւատարմութիւնը կը յայտնենք Սուրիական հայրենիքին, նոյն ատեն կոչ կ'ընենք սուրիահայութեան, որ կառչած մնայ անոր: Մենք

Իշխանություններու պատկանած ըլլալու հանգամանքներ չենք ուզեր վայելել, ոչ ալ կ'ուզենք կողմնորոշուիլ այդպիսի դիրքորոշումներուն մէջ: Մեզի համար գերակայութիւնը հայրենիքն է, եւ մենք, այդ հայրենիքին հովանիին ներքոյ, իբրեւ հայկական արմատներ ունեցող սուրիացիներ, մեր քաղաքացիական պարտականութիւններն ու պարտաւորութիւնները լրիւ կատարելու ենք:

Մեր ազնուութեամբ, մեր եղբայրասիրութեան հոգին ջատագովելու ընդհանուր դրուածքով, Արաբ ժողովուրդին հանդէպ մեր ազնիւ վերաբերմունքով, երկու ժողովուրդներու գոյակացութիւնը երաշխաւորող տրամադրութիւններ պէտք է ստեղծել, եւ այս մեր գլխաւոր ու հիմնական պարտականութիւնը կը սեպուի: